Հավելված N 9
Պրոբացիայի ծառայության պետի
2025 թվականի հուլիսի 10-ի
N 231-Լ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Պրոբացիայի ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) Լոռու մարզային մարմինը (այսուհետ՝ Մարմին) Ծառայության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Մարմինը գործում է Սահմանադրության, օրենքների, իրավական այլ ակտերի, Ծառայության և սույն կանոնադրության հիման վրա:

2. ՄԱՐՄՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3. Մարմնի նպատակներն են՝

1) հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ դատական ակտով նշանակված պատժի և հարկադրանքի այլ միջոցների կատարման միջոցով սոցիալական արդարության վերականգնումը, պատժի ենթարկված անձի վերասոցիալականացումը, իսկ պրոբացիայի անչափահաս շահառուների նկատմամբ՝ նաև նրանց ֆիզիկական ու հոգեկան բնականոն զարգացման ապահովումը, նրանց դաստիարակումը և այլ անձի բացասական ազդեցությունից պաշտպանումը.

2) քրեական վարույթի ընթացքում մեղադրյալի հնարավոր անօրինական վարքագծի կանխման ու դատարանի կողմից դրված պարտականությունների կատարման ապահովման միջոցառումների իրականացումը՝ այլընտրանքային խափանման

միջոցների՝ տնային կալանքի և վարչական հսկողության կիրառումն ապահովելու միջոցով.

3) հասարակության անվտանգության ապահովումը՝ կրկնահանցագործության կանխարգելման և կրճատման միջոցով.

4) հոգեբանական խորհրդատվության տրամադրման աշխատանքների իրականացումը.

5) պրոբացիայի շահառուի և տուժողի (տուժողի իրավահաջորդի) հաշտեցումը.

6) քրեական արդարադատության իրականացմանն աջակցությունը:

4. Մարմնի խնդիրներն են՝

1) քրեական վարույթի ընթացքում «Պրոբացիայի մասին» օրենքով նախատեսված այլընտրանքային խափանման միջոցների կատարումը.

2) ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների և դատարանի կիրառած հարկադրանքի այլ միջոցների կատարումը.

3) պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ զեկույցի տրամադրումը.

4) պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժի կրումից ազատելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում փորձաշրջանի մեջ գտնվող կամ պատժի կրումը հետաձգված անձանց նկատմամբ սահմանված վերահսկողության անհատական պլանավորումը և իրականացումը՝ գնահատելով ռիսկերն ու հաշվի առնելով պրոբացիայի շահառուի կարիքները.

5) վերասոցիալականացման ծրագրերի և միջոցառումների, պրոբացիայի շահառուի ռիսկերի և կարիքների գնահատման աշխատանքների իրականացումը.

6) պրոբացիայի շահառուի և տուժողի (տուժողի իրավահաջորդի) միջև հաշտարարության իրականացումը:

3. ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Մարմնի գործառույթներն են՝

1) Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված այլընտրանքային խափանման միջոցների կատարման ապահովումը.

2) Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված անվտանգության միջոցների կատարման ապահովումը.

3) Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված՝ ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարման ապահովումը.

4) պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ զեկույցների կազմումը.

5) Իրավաբանական անձանց նկատմամբ դատարանի կողմից նշանակված քրեաիրավական ներգործության միջոցների կատարման ապահովումը.

6) պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժի կրումից ազատելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում փորձաշրջանի մեջ գտնվող կամ պատժի կրումը հետաձգված անձանց նկատմամբ վերահսկողության իրականացումը.

7) օրենքով սահմանված դեպքերում հաշտարարության իրականացումը.

8) օրինապահ վարքագծի ձևավորման, վերասոցիալականացման և կրկնահանցագործությունների նվազման նպատակով պրոբացիայի շահառուների ընդունելության, ռիսկերի և կարիքների գնահատման իրականացումը, դրա արդյունքների հիման վրա անհատական վերասոցիալականացման ծրագրերի և միջոցառումների մշակումը և իրականացնումը.

9) Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված տնային կալանքի և վարչական հսկողության այլընտրանքային խափանման միջոցների, անվտանգության միջոցների, պատիժների և վերահսկողությունների հետ զուգահեռ կիրառվող էլեկտրոնային հսկողության կատարումը.

10) դատարան միջնորդությունների ներկայացումը, դատարաններում Ծառայության անունից ներկայացուցչության ապահովումը.

11) Մարմնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող առաջարկությունների, տեղեկանքների, արձանագրությունների, միջնորդագրերի, զեկուցագրերի և այլ փաստաթղթերի կազմման աշխատանքների իրականացումը.

12) պետական, տեղական ինքնակառավարման և այլ մարմիններից, պաշտոնատար անձանցից Մարմնի առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվության և նյութերի ստացումը.

13) հաշվետվությունների կազմումը.

14) Մարմնի գործունեությունից բխող օրենսդրությամբ սահմանված այլ գործառույթների իրականացումը:

4. ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

6. Մարմնի գործունեության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Ծառայության պետը:

7. Մարմնի անմիջական ղեկավարումն իրականացնում է Մարմնի պետը:

8. Մարմնի պետն անմիջական հաշվետու է Ծառայության պետին:

9. Մարմնի կողմից ստեղծված փաստաթղթերը ստորագրում է Մարմնի պետը, եթե օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այլ բան նախատեսված չէ:

5. ՄԱՐՄՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

10. Մարմնի կառուցվածքում ընդգրկված չեն ներքին կառուցվածքային միավորներ: